Ես կ՚առաջարկեմ Ձեզ այլ ևս մէկ գրութիւն, որոյ մասին ես շատ բան չ՚ասացի և ասել ևս չէի ուզեր. ես կը ցանկայի աւելի, որ դա առանց երկար բարակի իր ճշմարտութեամբ միայն Ձեր հաւանութիւնը գտնէր, այս է

5) Վարժարանը ո՛չ թէ մէկ կրօնական կամ քաղաքական կուսակցութեան գործ է, այլ բովանդակ ազգի։

Թէև օգտակար, զուցէ և հարկաւոր էր կրօնի դաստիարակութեան վրայ խօսք բանալ այժմ, բայց ես կը հրաժարուիմ այդ խնդրէն և կը ցանկամ՝ որ դուք գրութեանս մասին ձայն չ՚արկանէք, թէ որ դա իր Ներքին համոզեցուցիչ զօրութեամբ անմիջապէս Ձեր վրայ չը ներգործէ։ Մեկուսի թողնելով այս թէզան, ես կը գամ վերջինին, որ է

6) Դպրոցական գործերու բարուոքիչն է տարապայման հրապարակութիւնը (լա բիւպլիգիթէ, публичность)։

Այդ գրութեամբ մեք յայտնեցինք, թէ ի՞նչ պէտք է անել վարժարանները բարձրացնելու համար. մեք չը կամինք Բոքսն Խոլ խաղալ մեր հիմնարկութեանց հետ, այլ կը ցանկանք զնոսա բովանդակ ազգի առջև ազատ և բաց դնել։ Այժմ ես չեմ կրնար ասել, թէ ի՞նչպէս պէտք է կատարել այդ, թէ ինչպէս պէտք է մնալ այդ Պրուսիոյ, Սաքսոնիոյ կամ Ֆրանսիայի մէջ. խնդիրն այժմ դորա վրայ չէ։ Բայց երբոր դպրոցական կեանքն ամենայն տեղ բաց դրուած լինի, բարի եռանդ ու վեհ կը շարժի ազգերու մէջ, որք կը սկսեն մէկ մէկու՝ ճակատ առ ճակատ պատերազմ տալ, և ամենասուր զէնքերու ձեռնարկանել։ Այդ զէնքերէն արիւն չի թափուիր ՚ի հարկէ, այլ մտքերն ու ոգիք մէկ մէկու դէմ կը նետուին, և մենք կ՚ասենք, ահա տեսէք, ա՛յն տեղ լաւ է, այն տեղ կարող ենք Ռուսներէն, Ֆրանսիացիներէն բան ուսանել։ Սակայն նախ և առաջ մեք կը ցանկանք ամենալաւն ա՛յս տեղ ուսանել — Պրուսիոյ, Գերմանիոյ մէջ ընդհանրապէս։ Եթէ այդ այդպէս է, ուրեմն վարժարանի դուռն չըփակենք, ու մամուլի միջնորդութեամբ, որ նոյնպէս վարժարանի դաշնակիցն է, Նորա ցաւերը հրապարակաւ քարոզենք։ Ազգի մէջ այնքան սէր կայ վարժարանի համար, որ եթէ մեք Նորա ցաւերն ու վէրքերն յայտնապէս մերկացնենք ազգի առջև, վստահ եմ՝ որ սրտերն ու քսակներն իսկոյն կը բացուին և վարժարանը կստանայ՝ ինչ որ արժան է տալ Նորան։ Տացէ՜ Տէր՝ որ այդ շուտով կատարուէր։ (Հասանաբեան և առաջ Ծոփանարեա-բեան։)

(Մնացեալն է յաջորդ համարին։)

# ԲԱՐՈՅԱԿԱՆ

## ԴԻՄԱԻՈՆՈՒԹԻՒՆ

Աղու քոյդ աւաչ զբազում զարթուցին
Վշտըմբեր տատրակ զոյգաստատ ինքնին.
Արդեօք մի՞դ միայն ցաւ քո ազգեցին,
Թէ համհարդ որդւոց Հայոց աշխարհին.
Վէս անդութ անգեղ բաղեից երամք
Դաւաճանք սրբոց ծարաւիք արեան.
Ձեզ ասեմք անշուշտ՝ ձեզ ասեմք յանկարծ,
Ըմբոնել ՚ի հաղը առնուլ փոխադարձ.
Հա՛ւիկ գեղեցիկ բազմախորհ թռչնիկ,
Մխա՛կ վշտացեալ սրտիս հանդարտիկ,
Սակաւ մի ժուժեա՛ կա՛ց դու մխիթար.
Բարօրեա՛ զկեանս յուսով ընդ երկար,
Ձի՛ք վրէժ անթող չի՛ք յայսմ աշխարհի,
Ձի՛ք յանանց ՚ի կեանս ըստ կամաց Հաստչին,
Թէև անագան յայտ գայ միանգամ,
Անդարձ սաստկագին վճիռ տիրական։
Բայց ասա՛ պատմեա՛ որ ինչ անցք անցին,
Միայն զԱստուծոյ յիշեա՛ դու զբարին.
Որ կամի՝ կարէ՝ փրկէ զսիրելին,
Ցական թօթափել բուժէ զցաւալին.
Զի զփառս Աստուծոյ միշտ երկինք պատմեն,
Եւ երկիր խոնարհ Նմին ձայնակցի.
Ո՛ր սիրտ և բերան չէ՛ զոհ զնմանէ,
Ո՛ր դոյակ զգաստ յարտուղի ցնդէ։
Ա՛յն ինչ ՚ի կայանս ասէ յապահով՝
Զօրհնութիւնս և փառս երգէի հողւով.
Ցանկարծուստ ինձ հաս դուժկան սուրհանդակ,
Ցխոց երամոց գոչեւն աղաղակ.

Թէ աջա՛ ընդ մերձ ազատաց ջոկի՝
Մատեան խառնեցան ընդ ջոկս մեր ընտիր.
Հանդերձ բաղէխ յանապատս մորին,
Անխնայ խող'ալ՝ զօրս և անդ գտին.
Ո՛վ ամենարարի Արարիչ երկնի՝
Ցուցակ լաւութեան պատճառ հայելի.
Քեւ մեք ճոխացաք քեւ առաք բարի,
Զքեզն գոհանամք լուռ ամենայնի.
Ո՛չ չար մեք խնդրեմք, զոր տէրդ իսկ ատէ,
Այլ զայն միմիայն զոր կամի կարէ.
Զի քեզ յայտատամ, որ ես սեպհական
Տեսուչ տէր արդար տատրակաց համայն.
Մի տար գիշատիչ այլասեռ թռչնոց,
Իշխել վատաբար անմեղ մեր ձագուց.
Ո՛ արդեօք երբեք կարաց քաջ գիտել,
Անթիւ քոյդ բարիս մի առ մի թուել.
Այլ դու մեր տածիչ, փրկիչ ազատիչ.
Ուր ուրեք իցեմք՝ զքեզ փառաբանիչ,
Վառեալ 'ի սէր քո մնամք հալածեալ,
Ցանգ երամովին զճիգն 'ի յուս բարձեալ.
Զի սքանչելապատուեստ բարւոք կազմութեան՝
Այս հողագնդի մեծ տարածութեան,
Ո՞ գտաւ հասու կամ խորհրդակից.
Դու և եթ կարող, և այն յանդգոյից,
Ո՛ երբէք ծանեաւ զեղանակ աճման,
Թէև քաջ զննեալ գէթ մարդ բանական.
Զի քո տեսչութիւն գոյից ամենայն՝
Կառավար համայն ունի անսահման.
Տաս դու վայելուչ հողածին բուսոց,
Պճնել գեղաշուք զանազան գունոց.
Զերեսք դաշտաց բարձրաբերձ լերանց,
Զհովտըք առուաց վճիտ աղբերաց.
Ցորս անգիտանայ մատն հողեղինաց,
Տնկել կամ գործել, զոր ոչ իսկ կարաց.
Այլ ճարտարահնար զօրութիւն և կար՝
'Ի զարդ աշխարհիս Աստուծոյդ արար.
Շա՛տ է մեզ գիտել և խոստովանել,
Որքան զօրէ կարս ատո երկասիրել.
Քննել տուգել առաջի առնել,
Զմիտս համբակաց 'ի զարթուցանել.
Թէ Ամենառատն գեղեցիկ կարգեաց՝
Զերկինս և բլուրս ընդ ստոր դաշտաց.
Առ 'ի բնակել լուռ եղանակաց.
Ու՛մ զիմարդ հաճոյ լուռ յօժար կամաց.
Թէպէտ և կրկին բարութիւնք թուին՝
Ամենածաւալ բարի Արարչին,
'Ծով, լիճ, գետ, աղբիւրք. որով ոռոգին,
Դաշտ՝ լերինք՝ բլուրք՝ տեղիք արօտին.
Սիրոյն ապացոյց գիտիցե՞մք արդեօք,
Որ կեամք հաւասատեաւ Նորին երախտեօք.
Քանի որ բերիմք 'ի սէր 'ի պաշտօն,
Ցաւեցին մեզ կեանք ուրախութեան տօն.
Հայեսցուք 'ի վեր յերկնային մարմին,
Ուր գործք մեծութեան Հաստողին յայտնին.
Ընդ այն հայեցեալ աչք մեր զարմացին,
Մտաց խորհրդոցս անհաս ահագին.
Զինջ լուսաւորաց գեղովք և փառօք,
Ի ձև բոլորշի պճնեալ աստեղօք.
Զքնաղագոյն ինչ քան զերկինս ասել,
Չէ հնար յանշարժ զմտաւ ածել.
Ո՛ իմ լուսափիւռ գեղեցիկ պածառ
Ճառագայթարձակ Արեգն լուսափայլ.
Դու արդէն զանբաւ մեծութեան փառաց,
Քարոզ Արարչին վսեմ պատկերաց.
Լոյս քո զարդարիչ տեղւոյս կարեւոր,
Զեռուցիչ նիւթոց յանչափս հեռաւոր.
Նա չէ կարելի յանլոյս խաւարի՝
Դարմանել զկեանս կալ յարահողի.
Ցո՛ւշ ածել պարտ է նաև ըշանքաց
Վերստին օրհնել զնոյն տէր կենաց.
Երկիր անզգայ այնպէս զարդարեաց,
Առ որ ամենից պէտք են զարմանաց.
Արար թափանցիկ գոհարք ամենայն,
Եւ կարծր 'ի նոսա ակն անդամանդեան.
Այլ 'ի յամրութիւն շինուածոց որմոյն՝
Կիսաթափանցիկ քարն յարմարագոյն.
Սոյնպէս և 'ի մէջ հրահալելեաց՝
Ճանաչել կարեմք ըստ մերոց կարեաց,
Թէ ոսկին միայն զառաջին ունի՝
Տեղի յարգութեան ըստ մեծի մասին.
Զի չէ որպէս նիւթ անարգ ժանգահար,
Պէս պղինձ երկաթ կամ խրինձ կապար.
Զայս եւս իմանամք, թէ արարչական
Նախասահմանեաց Նորին հրամանն.
Կրկին ապացոյցք մեզ արդ երեւին,
Եւ բարբ կենդանեացս ազնուայ թուին,

Ոմանք քաղցր և հեզ, ոմանք են դաժանք.
Ոմանք բարեմիտ, և այլք խորամանկ.
Ոմանք առատաձիր, այլ ոմանք ժլատ.
Ոմանք փառասէր, և այլք ողջախոհ.
Ոմանք ախտամէտ, և այլք մաքրասէր.
Ոմանք չափաւոր, և ոմն ընչասէր.
Ոմանք են վայրագ և այլ մարդատեաց,
Եւ կէս մի է ծոյլ և զուարթակենաց,
Կէս մի վեհերոտ, և կէս քաջարար.
Այլք հնարագէտք, բազումք են տխմար,
Վառեալ 'ի կրից 'ի խէթ 'ի նախանձ,
Թափառ բնաւին 'ի բարւոյն արգելանց.
Այլանդակ հրէշ չէ' տար ժամել,
Ընդ աւրաւականաց գնալին գաւեղ,
Մեր այս անապատ գժխատ ակատան
Թէև հռչակի լսա խուցս անուան,
Ընդ ծով՝ նոյ յամէք ընդ աշխարհ համայն,
Թէ է անառիկ ամուր ապաստան,
Բայց աւաղ պատիւ մեզ յիշխանաւ տաւան
Պէտք պահպանք լսա խոչ պատա յման,
Ուստի անարգել հասին թշնամիք,
Կողոպտեալ առին բազում' կարասիք.
Մինչ ընթանալ հալոր փառք քեզ Տէր.
Որ մեզ յանդիման ցուցեր յատուկ սէր.
Անցեալ անց գնաց միջոց բարկութեան,
Որպէս թաւի թէ 'ի միում' վայրկեան.
Քո պատկեր չքնաղ ուր մերձ բնակին,
Անգուստ հալածեալ գիշակեր փախչին.
Զի և լսա կամաց լսա մեծի չնարհաց'
Առաւէն հալածեալ երջանիկ կենաց.
Կիրառ վճռեցեալ բարձրութեան 'ի չէք,
Ծակ սևափետուր խաղմարար մեղք.
Ոն և ոն արիք ցիրեցան որդիք,
Ընկել զուերակս սրով' ցանկալիք,
Զարգարել երփներփ հասակս ծաղկօք'
Ընդ մեր համասեռ քաղ հարազատօք.
Նաւէ զխովքն լուսաւոր զարծովք.
Երթութեամբ հայոց բարերար բուռեք.
Մեզ աստուածատուր է ճշմարտութիւն,
Մեր ճշմարտապետ է մեր բնութիւն.
Գործ իմաստութեան թէ՛ղ տայ կատարել,
Օգնեսց նոյնց առ 'ի պաշտպանել,
Զանձինս ծանիցուք կարոտ նպաստից.
Որ քննէ զխորս և զգաղտնիս սրտից.
Անմիջապէս նա առաջնորդէ'
Յաւգի պարտաւեան, զոր կամի սիրէ.
Արդ' աչի աչով աւգցուք 'ի նմանէ'
Զօդաշահ խրատ, որքան մեզ անկ է.
Նոր օրինակաւ մարզէ յանդիման,
Սիրէ և շահէ 'ի բարի փոխման.
Զի չէ մեզ պիտոյ ախտակաւ զրահ,
Ի բարձր վայրի կամ' զէն և սպառ.
Այլ նորին անհուն ողջութիւն բարի,
Որ հասէ ըղ մեզ յայամ' պայմանի.
Ապաքէն թողցուք զոյժ և զախտութիւն,
Դիմել փութասցուք առ Նոյն էութիւն.
Որ զընդհանուր կարգ և կապակցութիւն'
Եւ յեր ամեղծաւարս երկրորդ բնութիւն.
Եւ որ արարած մնացեալ մխտեաց'
Զփառս Արարչին, որ զայս կատարեաց.
Որ կարող իցէ թո'ղ արդ մեզ ցուցցէ,
Իսկ որ կամակորն, նա արատս իցէ.
Մեր սնաք անմեղաց հաստատուն եկաց,
Հրու հնազանդ նորին սուրբ կամաց.
Զի տէր աւհմննաց վճիռ տարրակաց,
Որոշութեամբ ճեալ հանդերձեալ կենաց.
Ընական կարգի ճշմարտապետի
Փառօք անձնիշխան միայն Արարչի,
Փառս և գոհութիւն միով բերանով
Համերգ որհնութեամբ տաք միով հոգւով.
Օ՛ն արիք երգեսք 'ի քաղցր 'ի նուագ
Թաշունք գեղեցիկ սարեակ և սոխակ,
Ընդ համակ սևաց բոլոր կենդանեաց
Հնչել զեղջիկ նուագս աւետեաց,
Թէ մեզ Էն անհաւն կառավար կարգեաց
Զիւրըն ճիշդ պատկեր, ում և հաւատաց.
Հայրս արդ եկէք ընդ ծով ընդ ցամաք,
Անվեհեր չափել զուզիս անպայթար.

ԵՂԻԱԶԱՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

## ԻՄԱՍՏՈՒՆ ՄԱՐԴ

Իմաստուն մի ասաց, թէ' եւ զնա ոչ առեմ' գիտուն և իմաստուն, որ բազում' գիրս և բանս իմաստեալ և պատմէ, այլ զնա զակեմ' որ զգանեան ուսուցանէ, և զխրատեալսն 'ի մեզս յուսաւորէ և զբարին քարոզէ. և զոր ասաց պատմէ, և ինքն զայն գործէ և զանձն իւր բարի օրինակ ցուցանէ մարդկան.

Աշխ.-Լուսինէ ՀԹ.